ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
26 մարտի 2024 թվականի N 0198-Ա

**ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 28 ՀԱՍՑԵԻ 0,16402 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍ, ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 7-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 11 ՀԱՍՑԵԻ 0,12504 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության 10.06.2008թ. <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՕ-117-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության 27.04.2010թ. ՀՕ-50-Ն օրենքի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի ղեկավարի 18.04.2021թ. թիվ 75-Ն հրամանով, հիմք ընդունելով Հայկ Վանիկի Մանուկյանի դիմումը (ծնված՝ 01.10.1958թ.), 18.03.2024 թվականին ըստ օրենքի տրված ժառանգության իրավունքի վկայագիրը՝ ժառանգության գործ 77, որակավորման վկայական ունեցող անձի կողմից կազմված հողամասերի հատակագծերը և այն հանգամանքը, որ 0,16402 հա և 0,12504 հա բնակավայրերի՝ բնակելի կառուցապատման հողամասերը չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չեն առաջացնում սերվիտուտ՝ **որոշում եմ.**

1. Ասատուր Խոսրովի Մանուկյանի ժառանգորդ՝ Հայկ Վանիկի Մանուկյանին (ծնված՝ 01.10.1958թ.), համասեփականատերեր՝ Ծաղիկ Վոլոդյայի Մանուկյանին (ծնված՝ 05.09.1964թ.), Անի Հայկի Մանուկյանին (ծնված՝ 10.04.1983թ.) և Էրիկ Հայկի Մանուկյանին (ծնված՝ 25.04.1984թ.) պատկանող Ակունք բնակավայր Բարեկամության փողոց 28 հասցեի 1965 թվականին կառուցված բնակելի տուն՝ 125,90քմ, բաց պատշգամբ՝ 11,90քմ, պարիսպ՝ 5,10քմ, 1970 թվականին կառուցված ավտոտնակ՝ 20,90քմ, ծածկ՝ 27,20քմ, 1960 թվականին կառուցված խոհանոց՝ 16,70քմ ճանաչել նրանց սեփականություն, իսկ 2008 թվականին կառուցված հացատուն՝ 18,50քմ, 2019 թվականին կառուցված անասնաշենք՝ 60,50քմ, հացատուն՝ 2,40քմ և պարիսպ՝ 6,10քմ որպես ինքնակամ կառույց:

2. Սեփականատերերի կողմից փաստացի օգտագործվող Ակունք բնակավայր Բարեկամության փողոց 28 հասցեի 0.16402 հա (ծածկագիր՝ 05-008-0164-0020) և Բարեկամության փողոց 7-րդ նրբանցք 11 հասցեի 0.12504հա (ծածկագիր՝ 05-008-0178-0014) բնակավայրերի՝ բնակելի կառուցապատման հողամասերը համաձայն 26.12.2002թ. ՀՕ-510-Ն օրենքի 7-րդ հոդվածի ճանաչվել է նրանց սեփականություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2024թ. մարտի 26
ք. Վարդենիս